

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և առաջարկվող կարգավորումների ընդունման անհրաժեշտությունը

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 2-րդ հոդվածով նախատեսվում է բացօթյա առևտրի հասկացությունը, որի համաձայն. **«բացօթյա առևտուր** առևտրի օբյեկտներից, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերից և առևտրի իրականացման վայրերից դուրս՝ օրենսդրությամբ թույլատրված ապրանքների առևտուր.»: Օրենքի 5¹-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. «2. Թույլատրվում է միայն **ծաղիկների, տնկիների, ամանորյա տնակատարությունների համար նախատեսված եղևիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների** բացօթյա առևտուրը: 3. Բացօթյա առևտուր իրականացնողները պետք է ապահովեն պայմաններ վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը և որակն ապահովելու համար: Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջապես գետնին, մայթին, սալահատակին:»:

Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվում են նաև հետևյալ հասկացությունները. **«սպառողական ապրանքների շուկա՝** առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների առուվաճառք.

գյուղատնտեսական արտադրանքի շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի (այսուհետ՝ գյուղատնտեսական արտադրանք) և սննդամթերքի առուվաճառք.»:

Օրենքի 3.1. հոդվածի 1-ին մասի համաձայն. «**ցանկացած անձ, որը ցանկանում է զբաղվել առևտրի իրականացման վայրի կազմակերպման տեսակներից առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների (սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում) կազմակերպման գործունեությամբ, պարտավոր է այդ մասին ծանուցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:**»:

Օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են նաև պահանջներ առևտրի իրականացման տարբեր վայրերի նկատմամբ:

Վերոնշյալ իրավական կարգավորումներից բխում է, որ սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի վաճառքը կարող է իրականացվել համապատասխան վայրերում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը ծանուցելու և այլ պահանջների պահպանման դեպքում: Միևնույն ժամանակ, Օրենքով նախատեսվում է նաև, որ բացօթյա առևտրի առարկա կարող են լինել միայն ծաղիկները, տնկիները, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիները և սոճիները, պաղպաղակը, ջուրը, այդ թվում՝ հանքային, հյութերը և զովացուցիչ ըմպելիքները:

Չնայած վերոնշյալ իրավակարգավորումներին՝ համայնքներում և գլխավորապես Երևան համայնքում մշտապես իրականացվում է սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի բացօթյա առևտուր դրա համար չնախատեսված վայրերում և օրենսդրությամբ ամրագրված պահանջների խախտմամբ:

Հարկ է արձանագրել, որ վերը նկարագրված առևտրի իրականացման դեպքերը շարունակական բնույթ են կրում՝ չնայած տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տուգանքի ձևով վարչական տույժի կիրառման բազմակի դեպքերի, և վերջինս արդյունավետ միջոց չի ծառայում համապատասխան զանցանքների կանխարգելման համար:

2. Առաջարկվող կարգավորումների բնույթը և դրանց իրավաչափությունը անձի սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից

Ներկայացվող օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորություն վերապահել ոչ սահմանված տեղերում և օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություն մատուցելու դեպքերում ոչ միայն տուգանքի տեսքով վարչական տույժ կիրառել, այլ նաև կիրառել լրացուցիչ վարչական տույժ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող առարկաների բռնագրավման տեսքով, ինչի հնարավորությունն ուղղակիորեն սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 24-րդ հոդվածով, որի համաձայն. *«Տուգանային միավորը, առարկաները հատուցմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական փույժեր. սույն օրենսգրքի 23 հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական փույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական փույժեր: **Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ փույժ:**»:*

Հաշվի առնելով, որ թեկուզև վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկաների բռնագրավումն անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտություն է, անհրաժեշտ է անդրադառնալ դրա

իրավաչափությանն այդ իրավունքն ամրագրող Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից:

Անձի սեփականության իրավունքը, որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունք, ամրագրված է Սահմանադրության 60-րդ հոդվածով, որի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փիրապետելու, օգտագործելու և փնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, փուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:»:

Անձի սեփականության իրավունքը ճանաչվում և պաշտպանվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով, որի համաձայն.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Լախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուլանքների վճարումն ապահովելու համար:»¹

ՄԻԵԿ վերոնշյալ դրույթներին և դրա հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային որոշումները հատկապես ուշադրության են արժանի՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. **«հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:»:**

¹ Ուշադրության է արժանի ՄԻԵԿ պրակտիկան այն մասով, որով արձանագրում է, որ բռնագրավումը որպես միջոց հանդիսանում է ոչ թե սեփականությունից զրկում, այլ սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն: (Forfeiture and confiscation are generally regarded by the Court as control of use of property, to be considered under the second paragraph of Article 1 of Protocol No. 1 despite the obvious fact that they entail a deprivation of “possessions” (AGOSI v. the United Kingdom, § 51; Raimondo v. Italy, § 29; Honecker and Others v. Germany (dec.); Riela and Others v. Italy (dec.); Imeri v. Croatia, § 66). Therefore, the Court’s constant approach is that a confiscation measure constitutes control of use of property (Air Canada v. the United Kingdom, § 34; Silickienė v. Lithuania, § 62; Aktiva DOO v. Serbia, § 78). The Court treats confiscation mainly as a control of the use of property within the meaning of the second paragraph of Article 1 of Protocol No. 1, (Handyside v. the United Kingdom, § 63; Agosi v. the United Kingdom, § 51; Karapetyan v. Georgia, § 32; Aktiva DOO v. Serbia, § 78), even though confiscation, by its very nature, deprives a person of ownership.

Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ուսումնասիրությունից բխում է, որ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցը պարզելիս անհրաժեշտ է անդրադարձ կատարել հետևյալ ենթահարցերին.

Ա. Արդյո՞ք առկա է միջամտություն անձի սեփականության իրավունքին,

Բ. Եթե այո, ապա արդյո՞ք միջամտությունն իրականացվել է օրենքի հիման վրա,

Գ. Եթե այո, ապա արդյո՞ք միջամտությունը պայմանավորված է եղել հանրության շահերով կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

Դ. Եթե այո, ապա արդյո՞ք միջամտությունը եղել է համաչափ:²

Անդրադառնալով առաջարկվող կարգավորումներին վերոնշյալ հարցերի լույսի ներքո.

Ա. Անձի սեփականության իրավունքին միջամտության առկայությունը.

Ինչպես նշվեց վերը, առաջարկվող նախագծերի փաթեթի ընդունման դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններին կվերապահվի լիազորություն բռնագրավելու վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկաները: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն. *«Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այն է, որ այդ առարկան, հարկադիր կարգով, անհատույց դարձվում է պետական սեփականություն: {...}»:*

² ՍԴՈ-1340 6-րդ կետ, ՍԴՈ-1610 4.3.2.-րդ կետ, IMERI v. CROATIA §§ 63 - 66 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-210495>, BEYELER v. ITALY <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58832>, Guide on Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights point 90 https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_1_Protocol_1_ENG.pdf

Նույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները համապատասխանաբար սահմանում են. «Եթե վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով նախատեսված է վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, ապա դրանք ենթակա են առգրավման: Առգրավում կատարելու մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը տրվում է վարչական իրավախախտում կատարած անձին: Արձանագրությունը ստորագրվում է այն կազմող անձի և վարչական իրավախախտում կատարած անձի կողմից:

Վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան առգրավելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, {...} համապատասխան մարմինը դիմում է դատարան՝ առգրաված առարկան բռնագրավելու պահանջով:»:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո կասկած չի մնում, որ առաջարկվող նախագծերի փաթեթով տեղական ինքնակառավարման մարմիններին վարչական իրավախախտման գործիքներ բռնագրավելու լիազորության իրականացման արդյունքում տեղի է ունենալու միջամտություն անձանց սեփականության իրավունքին:

Բ. Իրավունքին միջամտության իրականացումը օրենքի հիման վրա.

Անդրադառնալով այս չափանիշին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ միջամտության օրենքի վրա հիմնված լինելու պահանջը չի հանգում ներպետական իրավական համակարգում սուկ իրավական ակտի առկայությանը, այլ համարվում է բավարարված միայն այն դեպքում, երբ համապատասխան ներպետական ակտը բավարարում է որոշակի որակական

չափանիշների: Նշված չափանիշներն են իրավական ակտի հասանելիությունը, իրավական ակտի հստակությունն ու որոշակիությունը:³

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ իրավական ակտի հասանելիությունն ապահովվելու է դրա հանրային քննարկմամբ, հրապարակային ընթացակարգով ընդունմամբ և նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական կայքում հրապարակմամբ:

Ինչ վերաբերում է առաջարկվող իրավակարգավորումների հստակությանն ու որոշակիությանը, հարկ է նշել, որ ըստ ՄԻԵԴ դատական պրակտիկայի՝ օրենքը «կանխատեսելի է», երբ անհատն ի վիճակի է, անհրաժեշտության դեպքում, համապատասխան խորհրդատվությամբ, տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսել այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել կոնկրետ գործողությունը, և երբ օրենքից հստակ է իրավասու մարմիններին տրված հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը բավարար հստակությամբ՝ անհատին կամայական միջամտություններից համապատասխան պաշտպանություն տալու համար:⁴ Վերոնշյալի համատեքստում հարկ է նկատել, որ առաջարկվող կարգավորումները, նշված չափանիշների տեսանկյունից, նույնպես խնդրահարույց չեն կարող դիտվել, քանի որ առաջարկվող կարգավորումներն ավելի քան հստակ են, անգամ չեն պարունակում գնահատողական հասկացություններ:

Գ. Իրավունքի միջամտության պայմանավորված լինելը հանրության շահերով կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ իշխանության ցանկացած միջամտություն սեփականության իրավունքին կարող է արդարացված

³ BEYELER v. ITALY [GC] § 109 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58832>, HENTRICH v. FRANCE § 42 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-61480> LITHGOW AND OTHERS v. THE UNITED KINGDOM § 110 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57526>).

⁴ LJASKAJ v. CROATIA § 143 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-169658>

լինել միայն այն դեպքում, երբ այն ծառայում է հանրային շահին:⁵ Անդրադառնալով հանրային շահի հասկացությանը՝ եվրոպական դատարանը նշում է, որ նպատակները, որոնց հասնելու համար իրականացվում է միջամտությունը, և որը ներառվում է հանրային շահի հասկացության շրջանակներում, ընդարձակ է և չի կարող սպառիչ սահմանվել: Այս, ինչպես և այլ դեպքերում, ազգային իշխանությունները ունեն գնահատման լայն դաշտ, թե իրավունքի սահմանափակման որ նպատակը դիտարկել որպես հանրային շահից բխող, իսկ որը՝ ոչ, քանի որ ավելի լավ են տեղյակ ներպետական իրավիճակին, քան Դատարանը:⁶

Տվյալ դեպքում, առաջարկվող նախագծերի փաթեթը, առաջին հերթին, նպատակ է հետապնդում պաշտպանել հանրային առողջությունը⁷ և երկրորդ հերթին՝ ապահովել անձանց ազատ տեղաշարժի իրավունքը⁸ և վերջապես ուղղված է համայնքների քաղաքակիրթ արտաքին տեսքի պահպանմանը: Գաղտնիք չէ, որ բացօթյա պայմաններում հատկապես սննդամթերքի, բայց նաև այլ՝ ոչ պարենային ապրանքների պահպանումը և վաճառքը առավել ռիսկային է դրանց միջոցով տարատեսակ հիվանդությունների փոխանցման տեսանկյունից: Ավելին, առկա իրավիճակը ցույց է տալիս, որ բացօթյա առևտրի առարկա հաճախ հանդիսանում են անհայտ ծագման, անորակ ապրանքները, որոնց սպառման թիրախը մանկահասակ երեխաներն են:

Արգելված ապրանքների բացօթյա առևտրի իրականացումը հաճախ զուգորդվում է մայթերի, հետիոտնային անցումների զավթմամբ, և, որպես

⁵ BÉLÁNÉ NAGY v. HUNGARY [GC] § 113 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-169663>, LEKIĆ v. SLOVENIA [GC] § 105 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-188268>

⁶ FORMER KING OF GREECE AND OTHERS v. GREECE [GC] § 87 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-59051>

⁷ Հանրային առողջության պահպանումը միանշանակ բխում է հանրության շահից, ինչը պարզ է դառնում Սահմանադրության 25-րդ, 31-րդ, 32-րդ, 34-րդ, 35-րդ, 40-ից 42-րդ, 44-րդ և 45-րդ հոդվածների ուսումնասիրությունից, որտեղ սահմանվում է, որ այդ հոդվածներով ամրագրված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել առողջության պաշտպանության նպատակով:

⁸ Սահմանադրության 40-րդ հոդված:

հետևանք, քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքը խոչընդոտելով: Վերջապես, անորակ, անհայտ ծագման ապրանքների վաճառքը տարրական սանիտարական նորմերի չպահպանման պայմաններում անհամատեղելի են քաղաքակիրթ համայնքների տեսքի հետ:

Դ. Իրավունքի միջամտության համաչափությունը.

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի՝ կարգավորումների հետ համատեղելի լինելու համար անձի սեփականության իրավունքին միջամտությունը, բացի օրենքով նախատեսված լինելուց և հանրային շահերից բխելուց, պետք է նաև «արդար հավասարակշռություն» ապահովի հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև:⁹

Նշված հավասարակշռությունն ապահովված լինելու կամ չլինելու հարցը պարզելիս Դատարանի կողմից հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ: Նման գործոնների սահմանափակ ցանկ գոյություն չունի: Դրանք տարբերվում են դեպքից դեպք՝ կախված գործի փաստերից և միջամտության բնույթից:¹⁰

Սեփականության իրավունքի սահմանափակման համատեքստում արդար հավասարակշռություն գտնելու հարցը քննարկելիս, որպես կանոն, ուշադրություն են դարձնում նաև հետևյալ գործոններին.

ա. դատավարական գործոններ,

բ. միջոցների ընտրությունը,

գ. դիմումատուին առնչվող հարցեր:¹¹

⁹ BEYELER v. ITALY [GC] § 107 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58832>, ALIŠIĆ AND OTHERS v. BOSNIA AND HERZEGOVINA, CROATIA, SERBIA, SLOVENIA AND THE FORMER YUGOSLAV REPUBLIC OF MACEDONIA [GC], § 108 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-145575>

¹⁰ Guide on Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights point 147 https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_1_Protocol_1_ENG.pdf

¹¹ Guide on Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights point 150 https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_1_Protocol_1_ENG.pdf

ա. դատավարական գործոններ

Չնայած Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի պարունակում հստակ ընթացակարգային պահանջներ, Դատարանի պրակտիկայում այն մեկնաբանվել է այնպես, որ այն անձինք, որոնց սեփականության իրավունքի մասով տեղի ունենում միջամտություն, պետք է ողջամիտ հնարավորություն ունենան իրենց գործը ներկայացնելու իրավասու մարմիններին՝ այդ միջոցները արդյունավետորեն վիճարկելու նպատակով:¹²

Այս առնչությամբ հարկ է նկատել, որ ինչպես գործող կարգավորումների պայմաններում, այնպես էլ առաջարկվող փոփոխությունների ընդունման դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական տույժ կիրառվելու դեպքում համապատասխան որոշումները հնարավորություն կա (կլինի) բողոքարկելու ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով:

բ. միջոցների ընտրությունը

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի՝ արդար հավասարակշռման ստուգման տարրերից մեկն այն է, **թե արդյոք գոյություն է ունեցել այլ, ավելի պակաս միջամտող միջոց, որը հանրային իշխանությունները կարող էին ողջամտորեն կիրառել**: Այնուամենայնիվ, դրանց հնարավոր գոյությունը խնդրո առարկա օրենսդրությունն ինքնին չի դարձնում չարդարացված:¹³

Ըստ Դատարանի՝ ուշադրության արժանի մեկ այլ հանգամանք է այն, թե արդյոք հնարավոր կլիներ հասնել նույն նպատակին նվազ միջամտող միջոցներով, և արդյոք իշխանությունների կողմից դիտարկվել են նման միջոցներ:¹⁴

Դատարանը նշում է նաև, որ անգամ այն դեպքերում, երբ իշխանության կողմից չի տրվել հստակ բացատրություն, թե ինչու է առաջարկվող կարգավորումը

¹² G.I.E.M. S.R.L. AND OTHERS v. ITALY § 302, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-184525>, AGOSI v. THE UNITED KINGDOM, §§ 55 and 58-60 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57418>

¹³ JAMES AND OTHERS v. UNITED KINGDOM § 51 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57507>,

¹⁴ OAO NEFTYANAYA KOMPANIYA YUKOS v. RUSSIA, §§ 651-654 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-106308>, VASKRSIĆ v. SLOVENIA, § 83 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-173102>,

միակ միջոցը նախանշված իրավաչափ նպատակին հասնելու համար, Դատարանի համար կարող է ընդունելի լինել այն փաստարկը, որ հենց ընդունված միջոցի անհրաժեշտությունը, ի սկզբանե, պարզ է եղել:¹⁵

Առաջարկվող իրավակարգավորումները վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելիս, հարկ է նշել, որ, չնայած առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օժտել անձանց սեփականության իրավունքին առավել ինտենսիվ միջամտություն ենթադրող գործիքակազմով, դա արվում է այն դեպքում, երբ առավել քան ակնհայտ է, որ առկա՝ բացառապես տուգանքի նշանակման լիազորության առկայության պայմաններում, հնարավոր չէ հասնել սույն հիմնավորման «Գ» կետում նշված նպատակներին:

Նշվածի մասին է վկայում նաև, օրինակ, Երևան համայնքի սահմաններում իրականացված վարչարարության հիման վրա ձևավորված վիճակագրությունը: Այսպես, 2019-2021 թվականների ընթացքում Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու փաստի առթիվ կազմվել է թվով 3532 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, և նշանակվել 79.076.500 ՀՀ դրամի տուգանք, սակայն դրանից վճարվել է շուրջ 27.300.000 ՀՀ դրամը, այսինքն՝ շուրջ 35 տոկոսը: Չնայած վերոնշյալ վիճակագրությանը՝ Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի դեպքերը բազմաթիվ են:

գ. դիմումատուին առնչվող հարցեր

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև արդար հավասարակշռման գնահատման կարևոր գործոններից է այն, թե արդյոք անձը, որի սեփականության իրավունքին կատարվել է միջամտություն, փորձել է

¹⁵ ZELENCHUK AND TSYTSYURA v. UKRAINE § 122 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-183128>

օգտվել իրավական համակարգի թուլություններից, բացերից (weakness or a loophole in the system):¹⁶

Նշվածի լույսի ներքո ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ գործող 162-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման սուբյեկտները հաճախ նույն անձինք են, որոնց դեպքում տուգանքի նշանակումը պատշաճ կանխարգելիչ միջոց չի հանդիսանում, քանի որ վերջիններս «թաքնվում» են անվճարունակության կարգավիճակի տակ և օգտվում են այն հանգամանքից, որ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկաները վերջիններիցս չեն առգրավվում: Գործնականում, դեպքերի բացարձակ մեծամասնությունում տուգանքի տեսքով վարչական տույժի կիրառմանը հաջորդում է վարչական իրավախախտման դադարեցումը կարճատև ժամանակով, որից հետո ապօրինի առևտրի իրականացումը շարունակվում է:

3. Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ակնկալվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված զանցակազմը պարունակող արարքների կտրուկ նվազում:

4. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված գերատեսչությունները

Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

¹⁶ NATIONAL & PROVINCIAL BUILDING SOCIETY, LEEDS PERMANENT BUILDING SOCIETY AND YORKSHIRE BUILDING SOCIETY v. THE UNITED KINGDOM, § 109 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58109>, OGIS-INSTITUT STANISLAS, OGE C SAINT-PIE X AND BLANCHE DE CASTILLE AND OTHERS v. FRANCE §§ 69 and 71 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-66348>

5. Նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, կառավարության 2021-2026թթ. Ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագծերը բխում են ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4.5-րդ կետի 3-րդ ենթակետից, այն է՝ «Կառավարության ուշադրությունը կենտրոնացած է լինելու **բնակչության առողջության պահպանման ու բարելավման նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումների իրագործմանը**, ռիսկի գործոնների ազդեցության կանխարգելմանը, ինչպես նաև առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման նպատակով՝ գործող»: